

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԻՏԱԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտակոորդինացիոն խորհրդի փորձագիտական հանձնաժողովների գործունեությունը կանոնակարգելու և առավել արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև հետազոտությունների որակի բարելավման նպատակով առաջարկվում է հետևյալ ուղեցույցը.

1. Գիտական աստիճանի հայցման նպատակով հայցորդների կողմից ԵՊԲՀ ռեկտորին ուղղված դիմումները ընթացիկ ամսվա առաջին տասնօրյակում մուտքագրվելու դեպքում աշխատանքը կարող է ընդգրկվել փորձագիտական հանձնաժողովի տվյալ ամսվա նիստի օրակարգում:

2. Դիմումին կից պարտադիր պետք է ներկայացնել ԵՊԲՀ գիտության վարչության (գիտական կադրերի պլանավորման և պատրաստման բաժին) կողմից վավերացված՝ տվյալ գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայության մասին տեղեկանքը:

3. Նախնական փորձաքննության և թեմայի հաստատման ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է ունենան առավելագույնը 6 ամսվա վաղեմության ժամկետ:

4. Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ գրախոսական՝ կարծիք, ներկայացնելու համար պլան անտոացիաների դեպքում հատկացվում է 10 օր, ամփոփված ատենախոսությունների դեպքում՝ 10-15 օր:

5. Փորձագիտական հանձնաժողովների նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին տասնօրյակում:

6. Գիտական աշխատանքը անհրաժեշտության դեպքում (մանրամասն վերլուծություններ և լրացուցիչ կարծիքներ) փորձագիտական հանձնաժողովի օրակարգում կարող է մնալ մինչև 3 ամիս ժամկետով: Այնուհետև փորձագիտական հանձնաժողովը պարտավոր է դիմումատուին ներկայացնել գրավոր պատասխան:

7. Փորձագիտական հանձնաժողովի, գրախոսների, մի կողմից, և հայցորդի ու աշխատանքի գիտական ղեկավարի (խորհրդատուի), մյուս կողմից, քննարկումների ընթացքում ծագած դիտողությունները, առաջարկությունները, կարծիք-հիմնավորումները և պատասխան-հիմնավորումները ներկայացվում են գրավոր:

8. Գիտական աշխատանքների վերաբերյալ (թեմայի հաստատում, նախնական փորձաքննություն) հարցը փորձագիտական հանձնաժողովի նախագահի կողմից գիտակոորդինացիոն խորհրդում քննարկման և հաստատման է ներկայացվում վերջնական քննարկման, քվեարկության և եզրակացության առկայության դեպքում:

9. Ատենախոսական աշխատանքների պլան անտոացիաները քննարկման փուլում և ատենախոսության համառոտագրված տարբերակը գիտության վարչության կողմից տեղադրվում են ԵՊԲՀ պաշտոնական կայքէջում:

10. Փորձագիտական հանձնաժողովների քարտուղարները էլեկտրոնային ձևաչափով ապահովում են հանձնաժողովի անդամների իրազեկումը օրակարգում ընդգրկված գիտական աշխատանքների վերաբերյալ՝ նիստը գումարելուց 10 օր առաջ (հղում անել (Cc) նաև գիտության վարչության էլեկտրոնային հասցեին՝ science@ysmu.am):